«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի _____ N__-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի «Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորին ներկայացվող հիմնական պահանջները, ազգային օպերատորի ընտրության ընթացակարգը հաստատելու և վերահսկող մարմին սահմանելու մասին» N 37-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) Որոշման նախաբանում՝ «18-րդ հոդվածի 3-րդ կետին» բառերից հետո լրացնել «և «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 321.1 հոդվածի 5-րդ մասին» բառերը.
3) Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի (այսուհետ՝ ազգային օպերատոր) գործունեության դադարեցման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի։».

4) Որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի.
5) Որոշման N 1 Հավելվածի 1-ին կետը լրացնել 9-րդ և 10-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«9) ապահովի տեղորոշման կապարակնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ծրագրային ապահովման ծրագրային կոդի ամբողջական օրինակի (այդ թվում՝ բոլոր լրամշակումներից հետո համապատասխան արդիական տարբերակների) տրամադրումը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին կամ այդ ծրագրային ապահովման ծրագրային կոդի ամբողջական օրինակի պահուստային պահպանումն Էսքրոու (Escrow) ծառայություններ մատուցող երրորդ ընկերության կողմից.

10) ապահովի, որ սերվերները, որոնց վրա աշխատելու է համապատասխան ծրագրային ապահովումը և պահպանվելու են համապատասխան տվյալները, տեղակայված լինեն և պահպանվեն Հայաստանի Հանրապետությունում։»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
----------ի N ------ որոշման

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2023 թվականի

հունվարի 12-ի N 37-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների փոխադրման հետագծելիության նպատակով տեղորոշման կապարակնիքների օգտագործման մասին» համաձայնագիր 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ ազգային օպերատորի գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները։
2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի փետրվարի 3-ի «Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի ընտրության միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 112-Ա որոշման համաձայն ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ կարող է դադարեցնել ազգային օպերատորի գործունեությունը՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 321.1 հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված խախտումները ազգային օպերատորի կողմից մեկ ամսվա ընթացքում երկու անգամից ավելի կատարելու դեպքում։
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումը ազգային օպերատորի կողմից կատարված՝ սույն կարգի 2-րդ կետում նշված խախտումների վերաբերյալ որոշումներն անբողոքարկելի դառնալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված փաստերը ներկայացնում է Հանձնաժողովին։
4. Հանձնաժողովը, սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ազգային օպերատորին տրամադրում է ծանուցում, որտեղ նշվում են սույն կարգի 3-րդ կետում նշված փաստերը, ինչպես նաև տեղեկություններ՝ խախտումների ուսումնասիրության և գնահատման նիստի, այդ նիստի անցկացման վայրի, ամսաթվի, ժամի վերաբերյալ։
5. Հանձնաժողովը, սույն կարգի 4-րդ կետում նշված ՝ խախտումների ուսումնասիրության և գնահատման նիստը գումարում է սույն կարգի

3-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում։

6. Եթե սույն կարգի 4-րդ կետում նշված նիստին ներկայացված փաստերի ուսումնասիրության արդյունքում հաստատվում է, որ արձանագրված խախտումներն ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմք չեն հանդիսանում, ապա կազմվում է եզրակացություն՝ ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմքեր չլինելու վերաբերյալ։
7. Եթե սույն կարգի 4-րդ կետում նշված նիստին ներկայացված փաստերի ուսումնասիրության արդյունքում հաստատվում է, որ արձանագրված խախտումներն ազգային օպերատորի գործունեության դադարեցման հիմք են հանդիսանում, ապա կազմվում է եզրակացություն՝ ազգային օպերատորի գործունեության դադարեցման վերաբերյալ։
8. Հանձնաժողովը, կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ազգային օպերատորին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին։
9. Սույն կարգի 6-րդ կետում նշված եզրակացությունը ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի կողմից նախատեսվում է ազգային օպերատորի ընտրության մրցույթ՝ սույն որոշման 2-րդ հավելվածով սահմանված ընթացակարգին համապատասխան։
10. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումը սույն կարգի 6-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացնում ազգային օպերատորի գործունեության դադարեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ։
11. Ազգային օպերատորի գործունեության դադարեցման օր է համարվում սույն կարգի 9-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված օրը։
12. Ազգային օպերատորի գործունեության դադարեցման օրվան նախորդող օրը ազգային օպերատորը պարտավոր է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրել տվյալ պահին իր մոտ առկա՝ Եվրասիական տնտեսական միությունում տեղորոշման կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրումներին առնչվող ամբողջ տեղեկատվությունը։